# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող., 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» սեպտեմբերի 2023թ. № 164-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ 06-025-0019-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՐԱԾ 0.4895 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14.08.2023Թ.-Ի ԹԻՎ 138-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-025-0019-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.4895 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողատեսքերի գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 14.08.2023թ.-ի «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ 06-025-0019-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՐԱԾ 0.4895 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» և «ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 138-Ա որոշումները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ. Տ.

**2023թ. սեպտեմբերի 13**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 15 » սեպտեմբերի 2023թ. № 165-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի 06-025-0015-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Բովաձոր, 4-րդ փողոց, թիվ 14 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Կ.Տ.

2023թ. սեպտեմբերի 15
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 15 » սեպտեմբերի 2023թ. № 166-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերով, և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 23.12.2022թ. թիվ 71-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետը՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

**1.** Լոռի Բերդ համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

**1.1.** 01-01-01 դասակարգմամբ «կառավարման ապարատ» նախահաշվի 4111 հոդվածից 500.000 (հինգ հարյուր հազար) դրամը տեղափոխել 4222 հոդվածին և ըստ եռամսյակների այդ հոդվածների գումարները սահմանել հետևյալ չափերով.

4111 հոդվածի մասով.

1-ին եռամսյակ – 20.905.500 (քսան միլիոն ինը հարյուր հինգ հազար հինգ հարյուր) դրամ,
2-րդ եռամսյակ – 41.311.000 (քառասունմեկ միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 61.216.000 (վաթսունմեկ միլիոն երկու հարյուր տասնվեց հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 83.622.000 (ութսուներեք միլիոն վեց հարյուր քսաներկու հազար) դրամ:

4222 հոդվածի մասով.

3-րդ եռամսյակ – 500.0000 (հինգ հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 500.0000 (հինգ հարյուր հազար) դրամ,

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ

**2023թ. սեպտեմբերի 15**
**գ. Լոռի Բերդ**

*06954163*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 19 » սեպտեմբերի 2023թ. № 167-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0038-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի բնակիչ Նիհրուբար Անուշավանի Վարդումյանի կողմից ներկայացված դիմումը, 12.06.2023թ. տրված թիվ 1901 գրանցամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   ԵՄ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0038-0008 ծածկագրում գտնվող 0.24407 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0038-0008 ծածկագրով հողամասի մակերեսը 0.24407 հա

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն՝ հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.24407 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Նիհրուբար Անուշավանի Վարդումյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0038-0008 ծածկագրի տակ գտնվող 0.24407 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 189.62 քմ մակերեսով բնակելի տան, 22.36 քմ մակերեսով նկուղի, 22.76 քմ մակերեսով ավտոտնակի, 26.85 քմ մակերեսով անասնագոմի, 83.89 քմ մակերեսով անասնագոմի, 6.93 քմ մակերեսով պարսպի, 2.18 քմ մակերեսով պարսպի և 2.25 քմ մակերեսով պարսպի նկատմամբ համաձայն հավելվածի՝ ճանաչել Նիհրուբար Անուշավանի Վարդումյանի սեփականության իրավունքը:

4. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք Ագարակ գյուղի 06-009-0038-0008 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Ագարակ 16-րդ փողոց, թիվ 3 բնակելի տուն փոստային հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՝ Մ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Կ.Տ.

2023թ. սեպտեմբերի 19

գ. Լոռի Բերդ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » սեպտեմբերի 2023թ. № 168-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով գյուղի 06-101-0017-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Սվերդլով, 11-րդ փողոց, թիվ 8 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.Տ.

**2023թ. սեպտեմբերի 22**
**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
Էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » սեպտեմբերի 2023թ. № 169-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0031-0012 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Ուռուտ, 7-րդ փողոց, թիվ 19 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.Տ.

**2023թ. սեպտեմբերի 22**
**գ. Լոռի Բերդ**